իւրեանց թէ՝ ոչ արդելումք զՀայս յորժամ պատարագեն յԱյրին, որպէս մեք։ Դատաւորն, ոչ գիտեմ, և ոչ իմանամ զպատարագն, եւ որպէս առնեն Ցոյնք զայն եւս ոչ գիտեմ եւ ձեզ եւս ոչ կարեմ հրամայել, զի ընդդէմ է օրինաց իմոց։ Հայք առաւել բարձրացուցին զձայնս. որովհետեւ չգիտել ձեւանաս զայն և ընդդէմ օրինաց քոց քարոզես, գոնէ հրամայեցէք թէ զոր ինչ առնեն Ցոյնք յԱյրին, զնոյն և Հայք արասցեն։ Վարանեալ տատանէր 'ի միտս իւր Դատաւորն, թիւրել հերքել թերի թողուլ զգործն չէր կարելի՝ յիշէր զնախորդն իւր. անմարթ էր փոքու իւիք հաւանեցուցանել զՀայս և չկամէր վշտացուցանել զՑոյնս, օրն տարաժամեալ այլազգիք կամէին մեկնել, Հայք զպատասխան խնդրէին։ Ապա յետ խորհելոյ Դատաւորին ընդ Նուրի Էֆէնտեայ, թողին զխնդիր պատարագին լուծանել յԵրուսաղէմ, զի երկնչէին Նուրի և ամենեքեան. մի գուցէ գիւղական Ֆէլլահք դրդմամբ Ցունաց յարուսցեն աղմուկ մեծ մինչեւ լինիլ մարդասպանութիւն, զորոյ զկարծիս առեալ էին յառաջագոյն, որոյ վասն ցայն վայր չխօսէր ինչ Նուրի, և ոչ առ Դատաւորն առնել այսպէս կամ այնպէս։ Աղաչեցին Հայք զնուրի յայտնի խօսիլ զբանն զոր խօսեցաւ յունկանէ՝ զի լուիցեն ամենեքեան։ Ցայնժամ ասէ լու 'ի լու բազմութեան, ահաւասիկ տեսիք ամենեքեան թէ Հայք առին զմին 'ի բանալեաց, և զմի մասն եկեղեցւոյն սեփհական ինքեանց ըստ հրամանի Արքային և ըստ բանի վկայից, անարգել կատարել զպաշտամունս իւրեանց եւ Այրն բաժանորդ 'ի մէջ երկոցունց, այլ այժմ գնամք յԵրուսաղէմ, խորհիլ անդ 'ի վերայ խնդրոյ Պատարագին ըստ օրինաց Շէրիի, որպէս գրեալ է 'ի հրովարտակին, և զայն եւս կարգաւորեսցուք, լուիցեն ամենեքեան։ Ի սոյն միջոցի ոմանք 'ի Հայոց բերին զմի պատկեր եւ զմի լապտեր կախել 'ի վերայ փայտեայ դրան ըստ Ցունաց. յաղաղակէն նոցա, յանդիմանեաց Դատաւորն և արգել զՀայս, և ապա մեկնեալ անտի գընացին յԵրուսաղէմ։ Հայք մոռեալ յեկեղեցին. լուցին զկանթեղս և պաշտեցին զՀանգստեան աղօթս, եւ 'ի գիշերին կատարեցին զժամերգութիւն և պատարագ՝ փառաւորելով զտուիչն պարգեւաց։ Կային 'ի զննին Ֆէլլահ ժողովուրդք